ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2003 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2003թ. 9 ամիսների ընթացքում խորհուրդը հրավիրել է թվով 5 նիստ, որտեղ քննարկվել են բազմաբնույթ հարցեր:

ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 2003թ. առաջին նիստը գումարվել է հունվարի 31-ին, հետեւյալ օրակարգով՝

1. *16.10.2002թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N 5 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:*

   Զեկուցող՝ պրն. Վ. Մովսիսյան

2. *Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգիչ եւ վարչական ծախսերի հետազոտության երրորդ տարեկան (վերջնական) հաշվետվության մասին.*

   ա) Հաշվետվության համառոտ ներկայացում.

   Զեկուցող՝ ծրագրի ղեկավար պրն. Ա.Փորսուղյան

   բ) Հաշվետվության գործարար միջավայրի բարելավմանն ուղղված առաջարկությունների քննարկում:

Նիստի քննարկման արդյունքում հանձնարարվել է.

- ✓ Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի եւ նրանում դեռեւս չլուծված խնդիրների հաղթահարման մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ համարել ՀՀ կառավարության եւ Համաշխարհային բանկի համագործակցությունը նման ուսումնասիրությունների հետագա իրականացման առումով, որի նպատակով ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար պարոն **Կ.Ճշմարիտյանին՝** խնդրին շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համատեղ՝ բանակցելով Համաշխարհային բանկի Երեւանյան գրասենյակի ղեկավարության հետ մշակել նոր հետազոտությունների անցկացման առաջադրանք:

- ✓ Ըստ վերլուծության արդյունքների, արձանագրել, որ անցած տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից ձեռնարկած օրենսդրական, ինստիտուցիոնալ եւ կանոնակարգիչ փոփոխությունների շնորհիվ գրանցվել է աստճանական եւ նկատելի առաջընթաց ՀՀ գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ, ստեղծվել են անհրաժեշտ հիմքեր հաջորդ տարիներին էլ ավելի առաջընթաց ապահովելու համար, ինչպես նաեւ այն, որ հաշվետվության մեջ արված առաջարկությունների մի մասի լուծման ուղղությամբ մինչ հաշվետվության ներկայացումը ՀՀ կառավարության եւ ՀՀ ԳԱԽ-ի կողմից արդեն իսկ ձեռնարկվել են գործուն միջոցներ, միաժամանակ նշել, որ կան մի շարք ոլորտներ, որտեղ

ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտ է հավելյալ ուշադրություն դարձնել բարելավում ապահովելու նպատակով:
ա) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ պարոն **Ֆ.Յոլակյանին՝**

- Քննարկել հարկային կանխավճարների վերաբերյալ ուսումնասիրությամբ բարձրացված հարցերը: Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ Համաշխարհային բանկին հայտնել, որ հարկ վճարողներին հարկերի կանխավճարներ կատարելու պահանջ կներկայացվի միայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում:
- Քննարկել հարկային ուսումնասիրությունների վերաբերյալ բարձրացված հարցերը եւ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել հարկային ուսումնասիրությունների անցկացման կարգի հստակեցմանը վերաբերող առաջարկություն: Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ Համաշխարհային բանկի Երեւանյան գրասենյակին տեղեկացնել, որ տնտեսվարող սուբյեկտների մոտ հարկային մարմինների կողմից ուսումնասիրությունների անցկացման կարգը կանոնակարգված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի «Որևէ հարկային պարտավորությունից ավելի վճարված գումարների (գերավճարներ) հաշվանցման եւ վերադարձի դեպքերում եւ հսկիչ գնումների իրականացման դեպքում հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունների իրականացման կարգերը հաստատելու մասին» թիվ 502 որոշմամբ եւ հավաստիացնել, որ տնտեսվարող սուբյեկտների մոտ հարկային ուսումնասիրությունները կկատարվեն բացառապես նշված կարգին համապատասխան:
- Քննարկել արտահանողներին ավելացված արժեքի հարկի վերադարձման ընթացակարգերի հետագա պարզեցման հնարավորությունը եւ Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունների հետ համաձայնեցված կարգով՝ **մեկամսյա ժամկետում** Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել առաջարկություն:

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ պարոն **Ֆ.Յոլակյանին**, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ պարոն **Ա.Ավետիսյանին՝**

- Մեկ ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն հարկային եւ մաքսային օրենսդրությունների պարզաբանումների վերաբերյալ իրավասությունների բաժանման մասին: Քայլեր ձեռնարկել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87 հոդվածի համաձայն հարկային եւ մաքսային օրենսդրության վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների կանոնակարգման ուղղությամբ.
- Միջոցներ ձեռնարկել հարկային եւ մաքսային պարզաբանումների վերաբերյալ՝ շահագրգիռ կողմերի շրջանում նպատակային եւ հասցեական տեղեկատվություն տարածելու գործում.

գ) ՀՀ առողջապահության նախարար պարոն **Ա.Մկրտչյանին** եւ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետ պարոն **Հ.Հարությանին**՝ երկամսյա ժամկետում համապատասխանաբար սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություններ սանիտարական եւ հրշեջ ծառայությունների կողմից իրականացվող ստուգումների ընթացակարգերում համապատասխան պարզեցումներ կատարելու ուղղությամբ՝ չվտանգելով տվյալ ոլորտներում անվտանգության ապահովման մակարդակը:

Տրված հանձնարարականների կատարման արդյունքում՝

- Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության եւ Համաշխարհային բանկի Երեւանյան գրասենյակի ղեկավարության հետ ս/թ աշնանը վերոհիշյալ հետազոտության անցկացման վերաբերյալ:

- ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից մշակվել, սահմանված կարգով քննարկվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձման ենթակա հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգ»-ը եւ այն հաստատելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը: Վերոհիշյալ նախագծով նախատեսվում է նաեւ ուժը կորցրած համարել 2001թ.-ի հուլիսի 31-ի «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգը հաստատելու մասին» թիվ 692 որոշումը:
  Վերոհիշյալ կարգի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմից համապատասխան հանձնարարականով /084-2003 07.05.2003թ./ ուղարկվել է ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խմբի քննարկմանը՝ 7 օրյա ժամկետում կարծիք տալու առաջարկով:
  Կարգի նախագծի շուրջ աշխատանքային խմբում կազմակերպվել են քննարկումներ եւ արվել են բազմաթիվ դիտողություններ ու առաջարկություններ: Սակայն ՀՀ կառավարության 08.05.2003թ. նիստում հավանության է արժանացել վերոհիշյալ որոշման նախագիծը եւ այժմ գտնվում է վավերացման փուլում:
  Հաշվի առնելով վերոհիշյալ նախագծով խնդրի կարգավորման նկատմամբ գործարար միջավայրի խիստ շահագրգռվածությունը՝ հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խմբի առաջարկությունների քննարկումը ներառվել է սույն նիստի օրակարգում:

- «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87 հոդվածի համաձայն հարկային եւ մաքսային օրենսդրության վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների կանոնակարգման ուղղությամբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետին համապատասխան՝ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ ՀՀ կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին: Հաշվի առնելով

դա, եւ ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 31.01.2003թ. նիստի N 1 արձանագրության 4-րդ կետով տրված հանձնարարականի՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից մշակվել էր «Իրավական ակտերը պարզաբանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել էր կարծիքների ՀՀ Արդարադատության, ՀՀ Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ եւ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ: Հաշվի առնելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ վերջիններիս տարբեր մոտեցումները՝ ս/թ մարտի 21-ին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում կազմակերպվել է խորհրդակցություն՝ ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի եւ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ: Վերոհիշյալ խորհրդակցության ընթացքում կարծիքները տարբերակվել են, մասնավորապես.

ա/ որոշման մեջ ամրագրել այն բնագավառները, որոնց վերաբերյալ օրենքները նախատեսում են մեկ պետական լիազոր մարմին կամ այդ դրույթի ամրագրման անհրաժեշտությունը բացակայում է,

բ/ որոշման մեջ ամրագրել միայն բնագավառները թե՝ նաեւ պարզաբանումների տրամադրման կարգը /ինչպես դա ներկայացված է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված նախագծում/,

գ/ մաքսային սահմանին գանձվող հարկերի եւ հաստատագրված վճարների հաշվարկման եւ վճարման կարգին վերաբերող դրույթների մասով պարզաբանումները հաստատելու իրավասությունների բաշխման վերաբերյալ,

դ/ՀՀ վիճակագրության պետական խորհրդի դիրքորոշումը՝ կապված ԱՏԳ ԱԱ եւ Տնտեսական գործունեության դասակարգչի կիրառման շրջանակների հետ :

Հաշվի առնելով հարցի կարեւորությունը եւ տարաձայնությունները՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից հարցի վերջնական լուծման նպատակով առաջարկվել է ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական եւ իրավաբանական վարչություններին հանձնարարել կարճ ժամկետում ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել խորհրդակցություն՝ ընդհանուր մոտեցում ձեւավորելու եւ փոխհամաձայնեցված տարբերակը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

- Ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 31.01.03թ. նիստի N 1 արձանագրության 3-րդ կետի գ/ ենթակետով տրված հանձնարարականի կատարման արդյունքում ՀՀ Առողջապահության նախարարության կողմից պատրաստվում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն ըստ սահմանված կարգի կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

  Ի կատարումն վերոհիշյալ հանձնարարականի Պետական հրդեհային հսկողության մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացակարգերում պարզեցումներ կատարելու եւ հստակեցնելու նպատակով Արտակարգ իրավիճակների վարչության կողմից ՀՀ Արդարադատության նախարարություն է ներկայացվել «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» Արտակարգ իրավիճակների վարչության պետի

հրամանը եւ «Պետական հրդեհային հսկողության մարմնի աշխատանքների կազմակերպման հրահանգը հաստատելու մասին» ԱԻՎ պետի հրամանի նախագիծը:

ՀՀ ԳԱԽ-ի 2-րդ նիստը գումարվել է 27.02.03թ.-ին՝ հետեւյալ օրակարգով՝

1. *ՀՀ վարչապետի 2003թ. փետրվարի 25-ի N 74 -Ա որոշմամբ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի կազմում ռոտացիոն կարգով ընդգրկված նոր անդամների ներկայացում:*

/Զեկուցող՝ խորհրդի նախագահ Ա. Մարգարյան/

2. *ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների ընդլայնված կազմի՝ «44-ի ակումբի» 2002թ. նոյեմբերի 28-ի նիստում արված ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների շրջանակից արտահանման աջակցման եւ խրախուսման, հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման, օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցերի մշտական գործող երեք աշխատանքային խմբերի ստեղծման առաջարկության մասին:*

/Զեկուցող՝ խորհրդի փոխնախագահ Վ. Ներսիսյանց/

3. *ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի կողմից եւ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգիչ եւ վարչական ծախսերի երրորդ տարեկան հետազոտությամբ հայտնաբերված գործարար միջավայրի առկա խոչընդոտների փուլային քննարկում:*

/Զեկուցողներ՝ խորհրդի նախագահ Ա. Մարգարյան,
ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ Ե. Զախարյան/

Նիստի ընթացքում հանձնարարվել է.

- ✓ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ՝ պարոն. **Վ.Ներսիսյանցին** եւ **ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝**
  Երկշաբաթյա ժամկետում նախապատրաստել եւ հրավիրել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների ընդլայնված կազմի՝ «44-ի ակումբի» նիստ, որտեղ խորհրդի անդամներից ձեւավորել վերոհիշյալ մշտական գործող երեք աշխատանքային խմբերի անհատական կազմերը, խմբերի կազմից ընտրել խմբերի ղեկավարներին, որոշել աշխատանքային խմբերում քննարկման հարցերի եւ խնդիրների շրջանակը, մշակել խմբերի աշխատանքների կազմակերպման կարգը եւ ներկայացնել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

- ✓ «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն՝ պարոն **Ռ. Մարտիրոսյանին՝**
  ա/ Ձեռնարկել հատուկ միջոցառումներ հիմնադրամի կողմից կատարվող աշխատանքների, ծրագրերի, գործարարներին աջակցման հնարավորությունների մասին գործարար միջավայրի իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ:
  բ/ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ քննարկել հարկային եւ մաքսային օրենսդրության եւ դրանց պարզաբանումների մասին գործարար միջավայրում, հատկապես Հայաստանի հեռավոր մարզերում նպատակային տեղեկատվության տարածման, ներառյալ ստեղծված ինտերնետային էջերի տեղայնացման եւ ինտերակտիվ հնարավորությունների ապահովման գործում հիմնադրամի կարողությունների հետագա օգտագործման եւ ընդլայնման հարցը:
  Արդյունքների մասին **եռամսյա ժամկետում** տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը:

- ✓ **Աշխատանքային խմբերի ղեկավարներին՝** մեկամսյա ժամկետում հրավիրել աշխատանքային խմբերի նիստեր, մշակել խմբերի աշխատանքային ծրագրերը եւ առաջարկություններ ներկայացնել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի առաջիկա նիստերում քննարկումներ կազմակերպելու համար:

- ✓ **ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝**
  Աշխատանքային խմբերի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով աշխատանքային խմբերի անհատական կազմերի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը մեկ շաբաթյա ժամկետում տրամադրել գործարար համայնքը ներկայացնող խորհրդի աշխատանքային խմբերի բոլոր անդամներին:

Տրված հանձնարարականների կատարման արդյունքում՝

- ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի փոխնախագահ պարոն Վ.Ներսիսյանցի նախաձեռնությամբ խորհրդի քարտուղարության կողմից ս/թ մարտի 12-ին ՀՀ վարչապետի նախագահությամբ հրավիրվեց ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների ընդլայնված կազմի՝ «44-ի ակումբի» նիստ, որում խորհրդի անդամներից ձեւավորվեցին «Արտահանման աջակցման եւ խրախուսման», «Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման» եւ «Օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման» հարցերի մշտական

գործող աշխատանքային խմբերի անհատական կազմերը, խմբերի կազմից ընտրվեցին խմբերի ղեկավարները:

- Ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 27.02.03թ. նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի ա/ ենթակետով տրված հանձնարարականի «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին համապարփակ գործարար տեղեկատվության ապահովման նպատակով առաջարկ է ներկայացրել Եվրասիա հիմնադրամին՝ համատեղ ֆինանսավորմամբ «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գրասենյակում եւ մարզային մասնաճյուղերում /Շիրակ, Տավուշ, Սյունիք/ «Գործարար տեղեկատվական կենտրոնի» ստեղծման համար: «Գործարար տեղեկատվական կենտրոնի» ստեղծմամբ ՓՄՁ սուբյեկտներին կընձեռնի անվճար օգտվել «Իրտեկ» իրավա-օրենսդրական տեղեկատվական բազայից, ինտերնետից, մասնագիտական գրադարանից եւ այլն:
Սկսվել են «Սկսնակ ձեռներեցի ուղեցույցի» մշակման աշխատանքները, որն իր մեջ պարունակելու է տեղեկատվություն ձեռնարկությունների գրանցման հաջորդական քայլերի, պահանջվող փաստաթղթերի, գումարի, ժամանակահատվածի /գրանցման փաստաթղթերի օրինակելի ձեւերը կազմելու են ուղեցույցի մաս/, լիցենզավորվող գործունեության տեսակների, լիցենզիայի ստացման ընթացակարգերի եւ այլնի վերաբերյալ: Ուղեցույցում կներառվի նաեւ ձեռնարկությունների կազմակերպաիրավական ձեւերի եւ ըստ ոլորտների ՓՄՁ սուբյեկտների եւ թերությունների համեմատական վերլուծությունը:

- Ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 27.02.03թ. նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի ա/ ենթակետով տրված հանձնարարականի «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը նախաձեռնել է արտադրության, առեւտրի եւ սպասարկման ոլորտներում աշխատող ՓՄՁ սուբյեկտների համար հաշվապահական պարզեցված գործարար ուղեցույցների մշակումը, որոնք հիմնականում պարունակելու են տեղեկատվություն հաշվապահական եւ հարկային հաշվառումների վարման վերաբերյալ: Ուղեցույցների հետ գործարարներին կտրամադրվեն նաեւ օրինակելի փաստաթղթերի եւ հաշվետվությունների ձեւեր:
«Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ արտահանման հեռանկար ունեցող 10 ՓՄՁ սուբյեկտների համար ստեղծվել են ինտերնետային էջեր: Արտահանման խթանման նպատակով Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը ամբողջ 2003թ. ընթացքում առանձին ՓՄՁ սուբյեկտներին, համաձայն ստացված հայտերի, աջակցություն կցուցաբերի ինտերնետային էջերի ստեղծման նպատակով:

- ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի Արտահանման աջակցման եւ խրախուսման հարցերի աշխատանքային խումբը մինչ այժմ հրավիրել է երեք նիստ, Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խումբը նույնպես հրավիրել է երեք նիստ, իսկ օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցերի աշխատանքային խումբը հավաքվել է երկու անգամ: Վերոհիշյալ նիստերի ընթացքում քննարկվել են բազմաթիվ հարցեր եւ արվել են առաջարկություններ, ինտենսիվ աշխատանքներ են տարվում պրոբլեմների բանկի ձեւավորման ուղղությամբ::

Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խմբի ս/թ մայիսի 15-ի նիստում քննարկվել է «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձման ենթակա հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգ»-ը եւ այն հաստատելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը, որի վերաբերյալ խմբի անդամների կողմից գրավոր դիտողություններ եւ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարություն, որոնք ներառվել են սույն նիստի օրակարգում:

- Աշխատանքային խմբերի անհատական կազմերի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից տրամադրվել է գործարար համայնքը ներկայացնող խորհրդի բոլոր անդամներին:

Ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի N 2 արձանագրության 2-րդ կետով տրված հանձնարարականի՝ 2003թ. մարտի 12-ին քարտուղարության կողմից հրավիրվեց ՀՀ գործարարության աջակցման խորհրդի ընդլայնված կազմով թվով 3-րդ նիստը հետեւյալ օրակարգով՝

1. *ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների շրջանակից մշտական գործող երեք աշխատանքային խմբերի անհատական կազմերի ձեւավորման, խմբերի ղեկավարների ընտրության եւ խմբերի աշխատանքների կանոնակարգման մասին.*

   ա) Արտահանման աջակցման եւ խրախուսման հարցերի,

   բ) Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի,

   գ) Օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցերի:

Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում.

✓ Ի կատարումն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի ս/թ փետրվարի 27-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի՝ հաստատվել են ներքոհիշյալ աշխատանքային խմբերի ղեկավարները եւ խմբերի անհատական կազմերը.

ա) Արտահանման աջակցման եւ խրախուսման հարցերի աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար

- «Հայ Կոնսալտ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն

Խմբի անդամներ

- «Գառնի Գրուպ» ՓԲԸ-ի նախագահ
- ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ
- «Գրանդ Տորնթոն Ամիո» ՍՊԸ-ի տնօրեն
- «Հայ-Թեքս» ընկերության տնօրեն
- «Ագրոսերվիս» ԲԲԸ-ի նախագահ
- «Լիկվոր» դեղագործական ընկերություն ՍՊԸ-ի տնօրեն
- «Էյջ Փի Էլ Արմենիա» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն
- «Արագած-Պեռլիտ» ՓԲԸ-ի նախագահ
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի նախագահ
- «Մշակ» ՓԲԸ-ի նախագահ
- «Նուբարաշենի տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ-ի տնօրեն
- «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության մակրոտնտեսական հետազոտությունների եւ վերլուծությունների բաժնի պետ
- Հայ- Եվրոպական խորհրդատվական կենտրոնի գործադիր տնօրեն
- Եվրամիության առեւտրային պալատի գլխավոր քարտուղար

բ) Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար

- «Գրանդ Տորնթոն Ամիո» ՍՊԸ-ի տնօրեն

Խմբի անդամներ

- «Երեւանի Գարեջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի անվան Գյումրիի հիդրոէլեկտրակայան» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
- «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի նախագահ
- «Էյ Փի Ջի Լաբս» ՍՊԸ-ի մասնաճյուղի տնօրեն
- «Էյջ Փի Էլ Արմենիա» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- «Արտասահմանյան ներդրողների համագումար» ՀԿ-ի նախագահ
- «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն
- «Հայաստանի վաճառականներ» ՀԿ-ի նախագահ
- «Դոլմամա» ՍՊԸ-ի տնօրեն
- «Գառնի Գրուպ» ՓԲԸ-ի նախագահ

- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի նախագահ
- «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն
- «Թուֆենկյան» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության պետական եկամուտների քաղաքականության վարչության պետի տեղակալ – ոչ հարկային եկամուտների եւ մաքսային քաղաքականության բաժնի պետ
- Հայ- Եվրոպական խորհրդատվական կենտրոնի գործադիր տնօրեն
- Եվրամիության առեւտրային պալատի գլխավոր քարտուղար

գ) Օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցերի աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար

- «Եվրոստան Ույուտ» ՍՊԸ-ի նախագահ

Խմբի անդամներ

- «Գրանդ Տորնթոն Ամիո» ՍՊԸ-ի տնօրեն
- «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- «Արմենալ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- «Էյջ Փի Էլ Արմենիա» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն
- «Արտասահմանյան ներդրողների համագումար» ՀԿ-ի նախագահ
- «Ֆրստ Թրավլ ընդ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն
- «Հայաստանի վաճառականներ» ՀԿ-ի նախագահ
- Հայաստանի գյուղացիական փոխօգնության բանկի վարչության նախագահ
- «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի նախագահ
- «Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ-ի նախագահ
- «Արարատի ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ-ի նախագահ
- Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության նախագահ, «Ապավեն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
- «Էյ Փի Ջի Լաբս» ՍՊԸ-ի մասնաճյուղի տնօրեն
- «Արագած-Պեռլիտ» ՓԲԸ-ի նախագահ
- «Վեդի Ալկո» ԲԲԸ-ի նախագահ
- «ՄԱՊ» ՓԲԸ-ի նախագահ
- «Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն
- «Խնուս» ՍՊԸ-ի նախագահ
- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության պետի տեղակալ - փաստաթղթերի տեսչության բաժնի պետ
- Հայ- Եվրոպական խորհրդատվական կենտրոնի գործադիր տնօրեն
- Եվրամիության առեւտրային պալատի գլխավոր քարտուղար

ՀՀ ԳԱԽ-ի հերթական թվով 4-րդ նիստը գումարվել է 2003թ. հունիսի 4-ին՝ հետեւյալ օրակարգով՝

1. *31.01.2003թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N 1 և 27.02.2003թ. նիստի N 2 արձանագրություններով տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:*

(ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարություն)

2. *«ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձման ենթակա հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգ»-ի մասին առաջարկությունների եւ դիտողությունների քննարկում:*

(ՀՀ ԳԱԽ-ի հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խումբ)

3. *ա/ Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի՝ արտահանմանը խոչընդոտող հարցերի քննարկման մասին,*

բ/ Եվրամիության անդամ երկրներ Հայաստանից ձկան եւ ձկնամթերքի արտահանման արտոնագրման հիմնախնդիրների կարգավորման մասին:

(ՀՀ ԳԱԽ-ի արտահանման աջակցման եւ խրախուսման հարցերի աշխատանքային

խումբ)

Նիստի քննարկման արդյունքում խորհրդի անդամների համաձայնությամբ ՀՀ վարչապետի կողմից տրվել են հանձնարարականներ.

- ✓ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ՝ **Ֆ. Ցոլակյանին** եւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղար՝ **Վ. Մովսիսյանին.**
  Մեկ շաբաթյա ժամկետում կազմակերպել մասնագիտական եւ բովանդակային քննարկում ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների, ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի եւ Օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվային ակտերի մշակման հարցերի աշխատանքային խմբերի անդամների մասնակցությամբ՝ «ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձման ենթակա հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգ»-ը

հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ աշխատանքային խմբերի կողմից տրված առաջարկությունների եւ դիտողությունների, ինչպես նաեւ ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի՝ արտահանմանը խոչընդոտող հարցերի շուրջ, եւ ՀՀ վարչապետի մոտ, **մեկ շաբաթյա ժամկետում**, շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպել խորհրդակցություն քննարկումների արդյունքների վերաբերյալ:

✓ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար **Կ. Ճշմարիտյանին** եւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղար՝ **Վ. Մովսիսյանին՝** վերջնական զեկույցի ստացումից հետո, մեկ շաբաթյա ժամկետում, խնդրին շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել խորհրդակցություն՝ հանձնաժողովի առաջարկությունները քննարկելու նպատակով:

Վերոհիշյալ հանձնարարականների կատարման ընթացքում.

- «ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով վերադարձման ենթակա հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգ»-ը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ աշխատանքային խմբերի կողմից տրված առաջարկությունների եւ դիտողությունների, ինչպես նաեւ ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի՝ արտահանմանը խոչընդոտող հարցերի շուրջ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների, ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի Հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի, Օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվային ակտերի մշակման հարցերի աշխատանքային խմբերի անդամների մասնակցությամբ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության նիստերի դահլիճում հրավիրվել է խորհրդակցություն, որի հիման վրա կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի ««Ավելացված արժեքի հարկի գումարների հիմնավորվածությունը հաստատող տեղեկանքի տրամադրման եւ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կարգը հաստատելու մասին» թիվ 653 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը եւ այժմ գտնվում է ՀՀ կառավարության աշխատակազմում:

- Եվրամիության անդամ երկրներ Հայաստանից ձկան եւ ձկնամթերքի արտահանման արտոնագրման հիմնախնդիրների կարգավորման հարցի քննարկման վերաբերյալ ս/թ օգոստոսին Զարգացման հայկական գործակալության ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությունում հրավիրվել էր խորհրդակցություն ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության, Հայաստանի գյուղատնտեսության փոքր եւ միջին ձեռնարկությունների շուկաների զարգացման ծրագրի ներկայացուցիչների, ինչպես նաեւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող անդամների մասնակցությամբ, որի արդյունքում կազմվել է «Եվրոպական Միության երկրներ ձկնամթերք արտահանելու

նպատակով լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հաշվի առնելով խնդրի կարեւորությունը, հարցի կարգավորման համար զեկույցում նշված ժամանակի սղությունը, ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից առաջարկվել էր ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար պարոն Հ.Աբրահամյանին՝ խորհրդակցություն հրավիրել ՀՀ առողջապահության, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ արդարադատության, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ արտաքին գործերի նախարարությունների, ՀՀ կառավարության աշխատակազմի համապատասխան վարչության, ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի եւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության ներկայացուցիչների մասնակցությամբ, որի արդյունքում հանձնարարական էր տրվել ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը՝ մշակել վերոհիշյալ որոշման նախագիծը եւ ՀՀ վարչապետի մոտ հրավիրել խորհրդակցություն:

Ս/թ սեպտեմբերի 2-ին ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քատուղարությանն է տրամադրվել «Եվրոպական Միության երկրներ ձկնամթերք արտահանելու նպատակով լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի հիման վրա ներկայացվել է ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության առաջարկություններն ու դիտողությունները: Ի կատարումն ՀՀ վարչապետի 15.07.03թ. N 019-3171 հանձնարարականի ս/թ սեպտեմբերի 5-ին ՀՀ վարչապետի մոտ հրավիրվեց խորհրդակցություն: Խորհրդակցության արդյունքում որոշվել է 10 օրյա ժամկետում վերամշակել որոշման նախագիծը՝ հաշվի առնելով նաեւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության առաջարկություններն ու դիտողությունները եւ ՀՀ վարչապետի մոտ հրավիրել նոր խորհրդակցություն:

Ս/թ հոկտեմբերի 2-ին ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ արդարադատության, ՀՀ բնապահպանության, ՀՀ առողջապահության, ՀՀ գյուղատնտեսության եւ ՀՀ արտաքին գործերի նախարարների մասնակցությամբ ՀՀ վարչապետի մոտ կայացավ խորհրդակցություն, որի արդյունքում ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը հանձնարարվել է **մեկ շաբաթյա ժամկետում** ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել որոշման նախագիծ, որով ՀՀ առողջապահության նախարարությունը կճանաչվի վերոհիշյալ հարցերի համակարգման լիազոր մարմին:

Զարգացման հայկական գործակալության ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությունը Հայաստանում Ամերիկյան Առեւտրային Պալատից ստացել է Հայաստանում Ամերիկյան եւ Եվրոպական Միության Առեւտրային Պալատների համատեղ ուսումնասիրությունների արդյունքների վրա կազմված զեկույցը Հայաստանի հարկային համակարգի եւ օտարերկրյա ներդրողների հեռանկարների վերաբերյալ: Քարտուղարության կողմից գրություն է ներկայացվել ՀՀ վարչապետին՝ խնդրելով հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ արդարադատության նախարարություններին քննարկել վերոհիշյալ զեկույցը եւ քննարկման արդյունքները, հնարավորինս կարճ ժամկետում, տրամադրել ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ ՀՀ ԳԱԽ-ի հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման հարցերի աշխատանքային խմբում քննարկելու եւ խորհրդի առաջիկա նիստի օրակարգում ներառելու նպատակով:

ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի հերթական N 5 նիստը հրավիրվեց ս/թ հոկտեմբերի 22-ին, հետեւյալ օրակարգով՝

1. *04.06.2003թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N 4 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:*

Զեկուցող՝ պրն. Վ. Մովսիսյան

2. *ՀՀ ԳԱԽ-ի հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման ու օրենսդրական նախաձեռնությունների հարցերի աշխատանքային խմբերում Հայաստանի հարկային համակարգի եւ օտարերկրյա ներդրողների հետանկարների վերաբերյալ Ամերիկյան եւ Եվրոպական Միության Առեւտրային Պալատների հայաստանյան ներկայացուցչությունների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա կազմված զեկույցի քննարկման արդյունքների մասին:*

Զեկուցող՝ պրն. Մ. Բադեյան

3. *ՀՀ վարչապետի որոշմամբ ռոտացիոն կարգով ընդգրկված ՀՀ ԳԱԽ-ի հերթական նոր անդամների ներկայացում:*

ՀՀ վարչապետ՝ պրն. Ա. Մարգարյան

Օրակարգային հարցերի քննարկման արդյունքում ՀՀ ԳԱԽ-ի անդամների համաձայնությամբ ՀՀ վարչապետի կողմից հանձնարարականներ են տրվել.

- ✓ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար՝ պրն. **Վ. Խաչատրյանին եւ** ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ՝ պրն. **Ֆ. Ցոլակյանին՝ 10 օրյա ժամկետում,** ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության միջոցով, Հայաստանում Ամերիկյան եւ Եվրոպական Միության Առեւտրային Պալատների ներկայացուցչություններին եւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի անդամներին տրամադրել վերը նշված զեկույցի նկատմամբ եզրակացություններն ու առաջարկությունները, ինչպես նաեւ Հայաստանում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ խոշոր, փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտներում գործող ընկերությունների գործունեության ուսումնասիրության եւ նրանց նկատմամբ տարվող տնտեսական քաղաքականության մասին տեղեկանք:

Վերոհիշյալ հանձնարարականների կատարման արդյունքում.

- *Ըստ արձանագրության 3-րդ կետի հանձնարարականի համաձայն ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության եւ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից ստացվել են եզրակացությունները «Հայաստանի հարկային համակարգի եւ օտարերկրյա ներդրողների հետանկարների վերաբերյալ» Ամերիկյան եւ*

Եվրոպական Միության Առեւտրային Պալատների հայաստանյան ներկայացուցչությունների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա կազմված զեկույցի մասին եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարության կողմից ուղարկվել են ՀՀ ԳԱԽ-ի անդամներին եւ շահագրգիռ կազմակերպություններին:

- *Քարտուղարության կողմից նախապատրաստական աշխատանքներ են տարվում ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի հերթական նիստի հրավիրման համար:*

ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարություն